

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹՅԱՆ ՆԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՆԻՄ-
ՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՅՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱ-
ԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱ-
ՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 սեպտեմբերի 2009թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի,
Մ. Թոփուգյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի,
Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի
2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին»
Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Եվրասիական տնտեսական
ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցների կառավարման մասին
համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասրանի Նանրապետու-
թյան Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ»
գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝
31.08.2009թ. սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Նանրապետության
Նախագահի ներկայացուցիչ՝ ՆՏ ֆինանսների նախարարի տեղակալ Վ.Արամյանի
գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս

փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը
Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցների կառավարման մասին համաձայնագիրն ստորագրվել է 2009 թվականի հունիսի 9-ին Մոսկվայում՝ համաձայնագրի մասնակից թվով վեց պետությունների (այդ թվում՝ Նայասրանի Նանրապետության) և Եվրասիական զարգացման բանկի (այսուհետը՝ Բանկ) միջև: Նամաձայնագիրը կնքվել է Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին պայմանագրի և դրանում նախանշված հիմնական խնդիրների իրականացման, այն է՝ համաշխարհային տնտեսական և ֆինանսական ճգնաժամի բացասական հետեւանքներն ազգային տնտեսությունների համար հաղթահարելու, դրանց ֆինանսական և տնտեսական կայունությունն ապահովելու և հակաճգնաժամային հիմնադրամի (այսուհետը՝ Նիմնադրամ) մասնակից պետությունների տնտեսությունների միասնականացման գործընթացի հեղուկ խորացմանն աջակցելու նպատակով:

2. Նամաձայնագրով կողմերը սահմանել են Նիմնադրամի միջոցների համարել կառավարման կարգը: Նիմնադրամի միջոցների կառավարչի գործառնություններն իրականացնում է Բանկը: Սահմանված է, որ այդ գործառնություններն իրականացնելիս Բանկն առաջնորդվում է բացառապես Նիմնադրամի մասնակիցների շահերով և Նիմնադրամի ստեղծման նպատակներով, գործադրում է բոլոր հնարավոր ջանքերը Նիմնադրամի միջոցների արդյունավետ կառավարումն ապահովելու համար: Նամաձայնագրի 1-ին հոդվածի, ինչպես նաև Բանկի հիմնադիր փաստաթղթերի համաձայն Նիմնադրամի միջոցների և գործառնությունների նկատմամբ, սահմանված իրավագործության շրջանակներում, կիրառվում են Բանկի անձեռնմխելիության, առավելությունների, արտոնությունների վերաբերյալ նախատեսված նորմատիվ կանոնները:

3. Նամաձայնագրով Բանկն իրավասու է տնօրինել Նիմնադրամի բոլոր, այդ թվում՝ Նիմնադրամի մասնակիցների կենտրոնական (ազգային) բանկերի հաշիվներին փոխանցված դրամական միջոցները՝ այդ բանկերի հետ կնքվող բանկային հաշվի համապատասխան պայմանագրերի հիման վրա, ընդ որում, Նիմնադրամի միջոցների նկատմամբ մասնակիցների սեփականության իրավունքը Բանկին չի փոխանցվում:

Նամաձայնագրի 8-րդ հոդվածի համաձայն Բանկն իր ունեցվածքով պարասխանաբար չէ Նիմնադրամի գործառնությունների իրականացման շրջանակներում Նիմնադրամի մասնակիցների անունից իր սրանձնած պարտավորությունների համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պարտավորությունների սրանձնման դեպքում Բանկը խախտել է Նիմնադրամի փաստաթղթերի դրույթները:

Նիմնադրամի միջոցների փնտրիման շրջանակներում Բանկը Նիմնադրամի մասնակիցների անունից իրավասու է իրականացնել մի շարք իրավաբանական գործողություններ (գործառնություններ), որպիսիք նախատեսված են համաձայնագրի 2-րդ հոդվածում: Նիմնադրամի միջոցները Բանկի կողմից ենթարկվում են հաշվապահական հաշվառման՝ համաձայնագրի 3-րդ հոդվածում նախանշված կանոններով:

Նիմնադրամի միջոցների վարչական կառավարումը եւ Նիմնադրամի խորհրդի (Նիմնադրամի կառավարման մարմնի), փորձագիտական խորհրդի հետ գործակցությունը Բանկն իրավասու է իրականացնել համաձայնագրի 4-րդ հոդվածում նախատեսված նորմերի (ընթացակարգի) շրջանակներում:

Նամաձայնագրի 5, 6 եւ 7-րդ հոդվածների դրույթներին համապարասխան նախատեսված են Նիմնադրամի միջոցների փնտրիման օրինականությունը (նպատակայնությունը, հիմնավորվածությունը) սպուգելու, ֆինանսական հաշվեպրկությունները հաստատելու եւ Նիմնադրամի միջոցների օգրագործման հետ կապված հակաիրավական հնարավոր գործողությունների կանխման համապարասխան գործընթացներ:

Նամաձայնագրի եգրափակիչ դրույթներում նախատեսված են համաձայնագրի ուժի մեջ սրնելու, գործողությունը դադարելու, կողմերի միջեւ հնարավոր վեճերը լուծելու վերաբերյալ նորմեր:

4. Նամաձայնագրի 8-րդ հոդվածի համաձայն Նայասրանի Նանրապելությունը պարտավորվում է պարշած կերպով կատարել համաձայնագրի դրույթներից բխող իր պարտավորությունները:

5. Նամաձայնագրում ամրագրված դրույթները եւ դրանցից բխող՝ Նայասրանի Նանրապելության պարտավորությունները համահունչ են ՆՆ Սահմանադրության 9 հոդվածի դրույթներին եւ բխում են միջագային փոխշահավեր համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի հունիսի 9-ին Մոսկվայում ստորագրված՝ Եվրասիական Կարգապահության ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցների կառավարման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

16 սեպտեմբերի 2009 թվականի
ՍԴՈ-831